ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2012 թվականի
հուլիսի 11

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ /2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ/ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

- Համայնքի ղեկավարի իրավասությունների շրջանակում հրավիրվել է ավագանու 2 նիստ, ընդունվել է ավագանու 6 որոշումներ՝ կապված բյուջեի փոփոխության, անապահով ընտանիքներին սոց. օգնություն հատկացնելու, զին. ծառայողներին և ամուսնացող զույգերին դրամական օգնություն հատկացնելու մասին:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 6 որոշումներ և 4 կարգադրություններ:
- Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 2 հրաման:
- Մարզպետարանից և այլ կազմակերպությունների կողմից ստացվել է 59 գրություններ:
- Գյուղապետարանի կողմից ելքագրվել է թվով 45 գրություններ:
- Համայնքի բնակիչներին հատկացվել է թվով 284 տարաբնույթ տեղեկանքներ:
- Նորավան համայնքի բնակիչների կողմից ստացվել է թվով 6 դիմումներ և բոլորին տրվել է անհրաժեշտ լուծումներ:
- Կատարվում է քաղաքացիների ընդունելություն օրենքով սահմանված կարգով:
- Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերին համապատասխան 2 առևտրի օբյեկտներին հատկացվում է ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն:
- 2012 թվականի առաջին կիսամյակում հողի հարկի և գույքահարկի գանձումները կազմում են՝

		պլան հազ.դրամ	կատարող հազ.դրամ	%
ա Հողի հարկ՝	1-ին կիսամյակ	1700.0	1439.2	84.6
	2-րդ եռամսյակ	300.0	200.0	66.6
բ Գույքահարկ՝	1-ին կիսամյակ	320.0	170.5	53.3
	2-րդ եռամսյակ	160.0	80.0	83.3

- 2012 թվականի առաջին կիսամյակում ստացվել է դոտացիա 6139.2 հազ.դրամ, որից երկրորդ եռամսյակում 3069.6 հազ.դրամ: Վճարվել է աշխատավարձ 4693.1 հազ.դրամ, սոց. վճարները կազմել է 900.0 հազ.դրամ:
- Գրադարանի աշխատավարձը վճարվել է 200.8 հազ.դրամ, որից երկրորդ եռամսյակում 100.4 հազ.դրամ:
- Երիտասարդական ծրագրով կատարվել է 300.0 հազ.դրամ աշխատանքներ:
- 2012 թվականի մայիսի 9-ի կապակցությամբ պատերազմի մասնակիցներին և ազատամարտիկներին հատկացվել է հուշանվերներ 50.0 հազ.դրամ գումարի չափով:
- 2012 թվականի գարնանը դպրոցի, գյուղապետարանի շենքի և գերեզմանատան հարակից տարածքներում կատարվել է ծառատունկ և բարեկարգման աշխատանքներ:
- Համայնքային սեփականություն հանդիսացող 23.0 հա հողատարածքներ ավագանու որոշմամբ հատկացվել է վարձակալության 5 տարի ժամկետով մրցութային կարգով:

- Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների շրջանակներում Նորավան գյուղական համայնքում կազմակերպվել է անասնաղբի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ և ստուգումներ:

Նորավան համայնքի թվով 5 ընտանիքներ նախազգուշացվել են հանձնաժողովի կողմից կազմված Սան. էպիդ. կայանի, գյուղապետարանի և Արմավիրի ոստիկանության աշխատակիցներից:

- 2012 թվականի առաջին կիսամյակում մեծ ուշադրություն և հսկողություն է սահմանվել շինարարական աշխատանքները օրինական կարգով կատարելու գործում: Նորավանի գյուղապետարանի կողմից հատկացվել է շինարարության իրականացման 2 թույլտվություն:
- 2012 թվականի գարնանը կազմակերպվել և գյուղացիական տնտեսություններին է տրամադրվել անհրաժեշտ քանակությամբ պարարտանյութ և դիզելային վառելանյութ:
- Նորավան համայնքի գյուղացիական տնտեսությունները 2012 թվականին ընկել են ծանր պայմանների մեջ. անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով 90%-ով վնասվել են ծիրանի այգիները, դեղձը և սալորը:
- Նորավան համայնքում սելավի պատճառով 4.2 հա ցանքսերը 100%-ով վնասվել են: Ցորենի բերքատվությունը միջինից անհամեմատ ցածր է ստացվելու:
- Նորավան համայնքում ավագանու որոշմամբ կազմակերպվել է աղբահանություն շաբաթական մեկ օր, որի համար հատկացվել է 960.0 հազ. դրամ:
- Գրասենյակային, կապի, էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը առաջին կիսամյակում կազմել են 350.0 հազ.դրամ:
- Նորավան համայնքի միջնակարգ դպրոցի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ հատկացվել է 150.0 հազ. դրամի չափով գումար միջոցառման անցկացման համար:
- Հայաստանի Հանրապետության անկախության օրը՝ մայիսի 28-ին, կազմակերպված միջոցառմանը օգտագործվել է 50.0 հազ. դրամ:
- Նորավան համայնքից զորակոչվածներին՝ թվով 6 անձանց, հատկացվել է օգնություն ընդամենը 100.0 հազ. դրամ գումար:
- Նորավանի գյուղապետարանի կողմից վերահսկողություն է իրականացվում ընտանի կենդանիների ժամանակին բուժումներ կատարելու գործում:

Համայնքի անասնաբույժի կողմից ժամանակին իրականացվում է խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ստուգումները, դաբաղի պատվաստումը, բրուցելյոզի ստուգումները, խոզերի, մանր եղջերավոր անասունների անհրաժեշտ բուժումները և ստուգումները:

Իրականացվում է նաև 260 մեղվաընտանիքների վարիոտոզի մշակումը:

Նորավանի գյուղապետարանի աշխատակիցների աշխատանքները 2012 թվականի 2-րդ կիսամյակում անհրաժեշտ է կենտրոնացնել հետևյալ կարևոր խնդիրների վրա.

- Ապահովել բյուջեով նախատեսված մուտքերի հավաքագրումը ըստ եռամսյակների:
- Ստեղծել համապատասխան պայմաններ գրադարանի գործունեության համար:
- ՀՀ Կադաստրի Արմավիրի տարածքային ծառայության հետ համատեղ իրականացնել քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալների ճշգրտումներ:
- Միջոցներ և հնարավորություններ փնտրել Նորավան գյուղական համայնքում մանկապարտեզ կառուցելու համար:

- Ավարտին հասցնել գյուղապետարանի և գերեզմանատան հարակից տարածքների բարեկարգման աշխատանքները:
- Նորակառույց դպրոցի շենքից մինչև ք. Արմավիրի 8-րդ թաղամասը 800մ երկարությամբ ճանապարհը վերանորոգել, որը հնարավորություն կտա քաղաքաբնակ երեխաներին հաճախել դպրոց:

Նորավան գյուղական համայնքի բնակչության առջև ծառացած խնդիրներ կան, որոնց լուծման համար պահանջվում է մարզպետարանի միջնորդությունը ֆինանսական միջոցներ ներդնելու համար.

- Գյուղամիջյան ճանապարհների և ոռոգման ցանցերի բարեկարգում:
- Մանկապարտեզի շենքի կառուցում:
- Մշակույթի տան կառուցում:
- Սելավատարի մաքրման աշխատանքների իրականացում:

ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԻՔԱԵԼՅԱՆ

2012թվականի
հուլիսի 11